ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 90-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 27-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 27-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին:
4) «Թավիթիան Վինյարդս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 91-Ն**

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 26-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մասի այլ ոչ հարկային եկամուտ 7452 հոդվածին ավելացնել 9 000 000 (ինը միլիոն) ՀՀ դրամ և նպատակաուղղել՝

ա. գործառնական դասակարգման բաժին 08 խումբ 01 դաս 01 (հանգստի և սպորտի ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4261 (գրասենյակային նյութեր և հագուստ) հոդվածին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Համահայկական 8-րդ խաղերին մասնակցող Եղեգնաձոր համայնքի պատվիրակությանը մարզակոշիկ գնելու նպատակով,

բ. գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 3 480 000 (երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար,

գ. գործառնական դասակարգման 11 խումբ 01 դաս 02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածին՝ 5 420 000 (հինգ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 92-Ն**

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-րդ կետով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի տարածքում անվտանգ երթևեկության կազմակերպման ճանապարհային սխեման համաձայնեցված է լիազոր մարմինների հետ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի տարածքում անվտանգ երթևեկության կազմակերպման ճանապարհային սխեման՝ համայնքային ենթակայության ճանապարհների մասով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183, yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 93-Ա**

## «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշման հավելվածի 14-րդ կետը և «Թավիթիան Վինյարդս» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վարդան Խաչատրյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն «Թավիթիան Վինյարդս» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1.85303 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից (անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 09082022-10-0003 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0307-0035) 0.11 հա-ի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՈՍԿԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**